ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 4-00-01, sevan.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 օգոստոսի 2020 թվականի N 33-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԴԱՏԱԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 16)-րդ ենթակետի, 18-րդ հոդվածի 1-ին կետի 21)-րդ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ ԱՆ նախարարի տեղակալի և ՀՀ ԱՆ «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի գրությունները, հաշվի առնելով, որ Սևան համայնքում և տարածաշրջանում կենդանի անձանց և դիակների դատաբժշկական փորձաքննություններ իրականացնելու, ինչպես նաև դիահերձման համար առկա չէ համապատասխան կառույց կամ մասնաշենք՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Սևան համայնք, Կարմիր բանակի փողոց թիվ 66 / 1 հասցեում գտնվող 156.09քմ մակերեսով շինությունը, 5.59քմ մակերեսով աստիճանահարթակը և շինությունների զբաղեցրած 161.68քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության և հասարակական կառուցապատման գործառական նշանակության հողատարածքը, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ Սևանի տարածաշրջանում կենդանի անձանց, դիակների դատաբժշկական փորձաքննություններ իրականացնելու և դիահերձման համար:
2. Սևան համայնք, Կարմիր բանակի փողոց թիվ 66 / 2 հասցեում գտնվող, Սևան համայնքի սեփականություն հանդիսացող 300.0քմ մակերեսով գյուղատնտեսական նշանակության նպատակային և այլ գործառնական նշանակության հողատարածքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ին Կարմիր բանակի փողոց թիվ 66 / 1 հասցեում գտնվող շինությունների սպասարկման համար:

3. Կնքել անհատույց օգտագործման իրավունքի տրամադրման պայմանագիր՝ գործողության ժամկետը՝ մինչև «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեության ավարտը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ - 11 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԴԱՎԹՅԱՆ ՌՈԼԱՆ
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
8. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
11. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 4-00-01, sevan.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 օգոստոսի 2020 թվականի N 34-Ա

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՎԻՐԱԲԵՐՎԱԾ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԸ «ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀՈԱԿ-Ի ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21)-րդ ենթակետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Սևան համայնքի և Ֆրանսիայի Գրենոբլ քաղաքի ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում Ֆրանսիայի Հանրապետությունից Սևան համայնքին նվիրաբերված IRLSBUS ILIADE մակնիշի 2004թվականի արտադրության երկու ավտոբուսն անհատույց օգտագործման իրավունքով հաշվեկշռից հաշվեկշիռ փոխանցել «Սևանի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ին:
2. Ըստ ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված «ապրանքային հայտարարագրի»՝ յուրաքանչյուր ավտոբուսի մաքսային արժեքը 27.04.2020թ.դրությամբ կազմում է 6.511.625 /վեց միլիոն հինգ հարյուր տասնմեկ հազար վեց հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամ:
3. Սահմանել՝ ավտոբուսների օտարումն առանց մաքսային մարմինների և համայնքի ավագանու թույլտվության արգելվում է:
4. Ավտոբուսների նպատակային շահագործումը կարգավորվում է համայնքի ավագանու որոշմամբ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ - 11 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԴԱՎԹՅԱՆ ՌՈԼԱՆ
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
8. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
11. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 4-00-01, sevan.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 օգոստոսի 2020 թվականի N 35-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ կետի, 245-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով ֆիզիկական անձանց կողմից համայնքապետարան ներկայացրած դիմումները, մայր գումարների վճարման անդորրագրերի առկայությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Ներքոհիշյալ անձանց համար սահմանել հողի հարկի և գույքահարկի արտոնություններ հետևյալ չափերով՝

ՀՈՂԻ ՀԱՐԿ դրամներով

Հ/Հ	Հարկատուի անուն, ազգանուն	Հողի գտնվելու հասցեն	Մայր գումար	Տույժ
1	Մարուս Թորոսյան	Նաիրյան 55		6099
2	Վահրամ Հովհաննիսյան	Ազատության 76		5657

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ

դրամներով

Հ/Հ	Անվանում	ՀՎՀՀ	Հողի հարկ /տույժ/	Գույքահարկ /տույժ/
1	«Վազգեն Մկրտչյան» ՓԲԸ	08600472	149275	117950
2	«Երևանի առագաստային ակումբ» ՀԿ	02581049		30604

ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

դրամներով

Հ/Հ	Հարկատուի անուն, ազգանուն	Գույքի հասցեն	Մայր գումար	Տույժ զիջում
1	Հովհաննես Գրիգորյան	Ս.Սևանեցու 9 / 2-1		5543
2	Վահրամ Հովհաննիսյան	Ազատության 76		16401

2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ - 11 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԴԱՎԹՅԱՆ ՌՈԼԱՆ
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
8. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
11. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ